# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-24/10/Բ/5/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Կիսաճտքավոր կոշիկ: Սև գույնի բնական կաշվից՝ 1.4-1.6 մմ հաստությամբ, երեսամասը՝ ամբողջական, երկարացված ձևավոր հետևամասերով: Ճտքերի վերնամասերը ծալված, աստառի հետ միացված են փափուկ միջադիրով: Ճտքերի բարձրությունը՝ 21-25 սմ: Ներդիրը կաշվից՝ (պադոշ) հանովի-դնովի: Լեզվակը միացված է առաջամասին և ճտքերի ստորին մասին, ներբանների եզրերը վրաքաշվող մասերի հետ՝ կարերով, միացման մեթոդը՝ սոսնձով և գամերով (մեխերով): Ճտքի քուղերի անցքերը մշակվում են 7-9 զույգ կոճականցքերով (կախված կոշիկի չափսերից) ցինկապատ՝ պատված պաշտպանիչ ներկով, որը կապահովի խոնավ եւ ցածր ջերմաստիճանի ժամանակ կոռոզիայից և կկանխարգելի քուղերի սառցակալումը: Քուղերը պետք է պատրաստված լինեն ամուր եւ անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից, որի որակը կապահովի կոշիկի սահուն եւ արագ քուղավորումը: Քուղերի երկարությունը՝ 125-150սմ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթավորումը՝ ստվարաթղթե արկղերով, արկղի մեջ մինչև 20 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտ. կազմ-ն անվ., արտ. ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար պետք է ներկայացնի կաշվի բաղադրության և հաստության վերաբերյալ՝ արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս - հասակային սանդղակը. 38 – 47, քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО АШОТ КАРАГЕЗЯН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-24/10/Բ/5/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | - |